

..ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՈՒ ԳԱՆ.. ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԳ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1894

ԹԻԻ 2



բլրին գողտմն ելլելու աւելի դիւրին կերպ մը գաած են: Բարեբաղոյ մարդ մը որ իւր փայտի բեռը պարպելէ ետե ետ կը դառնայ դատարկ դահուկով, աղայքը կը նստեցունէ իւր դահուկին մէջ և վեր կը հանէ իրեն հետ: Ինչ տարբերութիւններ կան մարդոց մէջ: Անոնցմէ ոմանք կը նկատեն աղայքը իրրն ձանձրոյթ, և անոնց ամէն խնդրուածին «իջ» կը պատասխանեն: Ոմանք իրենց չափահաս մարմիններուն մէջ կը պահեն աղայոց նկատ-

ՁՄՆՈՒՆԱՅԻՆ ՉԲՈՍԱՆՔ

ՁՄՆՈՒՆԱՅԻՆ ՉԲՈՍԱՆՔ
Դահուկով (բեռ) բլրէ վար սահելու զքօսանքին անպատեհութիւններ.

րէն մին սա է որ վար սահելէ ետքը պէտք է դահուկը նորէն վեր հանել: Բայց հոս կան խումբ մը աղայք որ

մամբ համակրանքով լի սիրտ, և ուրախ կ'ըլլան եթէ առիթ ունենան զայնս երջանիկ ընելու: Այսպիսի փոք-


րիկ մարդասիրութիւններ երախտագիտութեամբ կը յիշուին մանկանց մարդկութեան հասակի հասնելէն և անոնց մարդասիրութիւն ցուցնողներուն երկրէս բաժնուելէն շատ ետքը :

ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆԸ

Պարտիմը խոստովանիլ թէ այս պատկերը փորագրողը շատ չէ յաջողած նմանցունել զայն աշխարհիս ամենէն համբաւաւոր արուեստագետներէն միոյն մէկ նկարին : Նկարին էր Հոլանտացին Ռէմպրանտիմ որ ապրե-

րէ զնա և որ, երբ վառած կրակին լոյսին իւր վրայ ծագելովն կ'ըլլայ առարկայ զինուորին և աղախնոյն հետաքրքրական նայուածքին, թէպէտ սիրտը խոստացունելով կ'ուրանայ իւր Տէրը, սակայն մէկ վայրկեանի մէջ նորէն կը փոխուի, և կը զըջայ տեսնելով Տէրոջը աչքն իրեն ուղղուած՝ ցաւազին կարեկցութեամբ : "Մնկալիլ էր մեր այս պատկերին վրայ ցուցնել Ռէմպրանտիմ նկարած այն հուշակաւոր պատկերին գոյներու ճոխ հակադրութիւնը և առաքեալին դէմ-

րեզման իջնել և ահա, առաւօտ մը մինչ պայծառ արեգակը ծագած է, տղան հառաչանօք կ'արթննայ իւր քնէն, մըտածելով թէ այլ եւս չունի հայր : Տեղի կ'ունենան յուզարկաւորութեան հանդէսը, տարօրինակ հոգեր և պատրաստութիւններ, մխիթարութեան խօսքերը, վերջին հրաժեշտը, վշտազին բաժանումը, բայ գերեզմանը, և յետոյ սգաւորք կը դառնան ետ և մէկը պէտք է բռնէ հօրը տեղը : Ո՞վ կրնայ ըլլալ այն : Ո՞վ բաց ի այդ տղայէն, որ տարիներէ հետէ եղած



ցաւ 1607է մինչև 1669, իսկ նկարուած պատկերը կը գտնուի հիմա Սբ. Փեթրոսպուրկի մէջ : Ռէմպրանտիմ անզուգական կը համարուի իբրև կենդանագրի նկարիչ : Կը յաջողէր ի յայտ բերել բուն նկարագիրն անոնց որոց պատկերը կը հանէր, և ուստի իւր նկարներն այնպէս կենդանի կ'ելլէին ձեռքէն որ, ինչպէս ըսուած է, կարծես թէ պատկերը դուրս պիտի ելլէր շրջանակին մէջէն և խօսէր քեզի հետ : Այն նկարը տեսնող անձ մը կ'ըսէ . « Ռէմպրանտիմ կը կեդրոնացունէ բոլոր լոյսը և բոլոր ուշադրութիւնը այն անձին երեսին վրայ որ կ'ուրանայ իւր Տէրը և սակայն կը սի-

ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆԸ

բին վրայ արտայայտուած տազնապը և կ'ըրբերը :

ՀՕՐԸ ՏԵՂԸ ԲՈՒՆԵԼ

Կան շատ մը ուրախ սրտով, պայծառ աչուրներով տղայք, զերծ հոգերէ, և բարորովին խաղուն և երջանիկ, որք ասկէ քիչ ժամանակ ետքը թերևս պիտի կոչուին բռնել իրենց հօրը տեղը : Անոնք հիմա դժուարաւ կը հասկնան այս բանը, և սակայն պիտի գայ այդ ժամանակը : Յանկարծ կրնայ հայրը մեռնիլ արկածով մը, կամ տարիներով սաստիկ աշխատելուն պատճառաւ հիւանդանալ և գե-

րի իւր հօր պարծանքը, ուրախութիւնը և յոյսը : Տարօրինակ պիտի թուի պատանիի մը նոր հոգեր և նոր պարտականութիւններ առնուլ իւր վրայ, կենալ այնպիսի մէկու մը տեղ որում ինք ժամանակաւ մտիկ կ'ընէր և կը հնազանդէր. և սակայն կը թուի թէ այդ է անոր ընելու մի միայն բանը : Տունը պէտք է որ պահուի, սրտաբեկ մօրը պէտք է որ մխիթարութիւն տրուի, տղայք պէտք է որ կառավարուին և կրթուին, և մէկը պէտք է որ բռնէ հօր տեղը, և այսպէս հաճոյից և զբօսանաց ծրագիրներէն և յատակագիծներէն շատր պէտք է որ ջնջուին :

Տղան պարտի մարդ ըլլալ ժամանակէն առաջ: Նա պէտք է որ խորհի, մինչ ուրիշներ չեն խորհիր. պէտք է որ ստակի խնայութիւն ընէ, մինչ ուրիշներ անհոգութեամբ կը ծախսեն. պէտք է որ ծանրագլուխ ըլլայ, մինչ ուրիշներ ուրախ և զուարթ են. և մինչ ուրիշներ կ'ընեն ինչ որ իրենց հաճոյ է, նա պարտի խորհիլ մօրը, եղբայրներուն և քոյրերուն վրայ:

Հօրը տեղը բռնող տղան պարտի սորվիլ իւր անձին հոգ սանիլ: Չի կրնար իւր հօր կատարած բոլոր գործերն ընել. պէտք չէ որ փորձէ սյգ բանը: Պէտք չէ որ չարչարէ ինքզինք իւր կարողութենէն վեր բաներու ձեռնարկելով, և մէկ ժամու մէջ աւելի

ուակ. իէ. 10): Եւ եթէ որդի մը ինքզինք կը ցուցնէ արժանի անոնց բարեկամութեան, պիտի գտնէ որ ոչ մէկ բան զոր ժառանգած է իւր հօրմէն՝ աւելի պատուական է քան այն հին բարեկամները, զորս իւր հայրը թողած է իւր ետևը: Թող յաճախ դիմէ անոնց. և եթէ շփոթութեանց ժամանակներ խրատի համար դիմէ անոնց, պիտի հասկնայ թէ կրնայ անոնց դիմել նաև օգնութեան համար նեղութեանց և կարօտութեանց ժամանակ:

Հօրը տեղը բռնող տղան պարտի ճաննալ իւր հօրը Աստուածը: Պարտի կարգալ իւր հօրը Աստուածայուն չը, և ծնրագրել, ինչպէս իւր հայրը

սորվելու, ժրջան՝ աշխատելու, և շրջա՝ հնազանդելու. թող միտք պահէ թէ թերևս պիտի գայ ժամանակ երբ ինքն ալ պիտի բռնէ իւր հօր տեղը. և խորհի թէ պէտք է որ պատրաստ ըլլայ այն պարտականութեանց որք կրնան ելլել իւր առջև, երբ Աստուած իւր նախախնամութեամբ նոր բռններ դնէ անոր վրայ և կոչէ զնա բռնել հօրը տեղը:

ԶԱՆԶԻՊԱՐ


Զանգիպարի վեհապետը առաջ կ'իշխէր ընդարձակ երկրի մը վրայ Ափրիկէի ցամաքին մէջ: Բայց 1884ին անոր իշխանութեան ցամաքային մասը անցնելով Անգղիոյ և Գերմանիոյ, ասոնք բաժնեցին զայն իրենց մէջ: Այդ ժամանակէն հետէ Զանգիպարի վեհապետին երկիրը կը բաղկանայ երկու կղզիներէ, որք են Զանգիպար և Փէմպա, 165,000 բնակիչներով, որոց գրեթէ կէսը կը բնակին Զանգիպար քաղաքին մէջ: Այժմու վեհապետին անունն է Սէյիտ Ալի Պին Սաիտ: Անգղիացիք թեւարկութիւն հաստատեցին այս կղզիներուն վրայ 1890ին:

ՓՈՔՐԻԿ ՔԱՐՈՉԻՉ ՄԸ

Սիրելի փոքրիկ բարեկամներս,

Մեծ Աւետիքէին մէջ վերջերս ատեն ատեն քարոզներ կը հրատարակուին: Խորհեցայ թէ ինչու համար Տալոյ Աւետիքի մէջ ալ երբեմն քարոզներ չհրատարակուին: Միայն թէ տղայոց համար հրատարակուած քարոզները պէտք է որ տղայոց կողմէ խօսուած ըլլան: Արդ ես վերջերս քանի մը անգամ լսեցի հազիւ վեց տարեկան տղու մը քարոզները, և փափաքեցայ ձեզ քիչ մը տեղեկութիւն տալ անոր քարոզելու կերպին և քարոզներուն վրայ: Այս տղան քարոզի մը կրասերագոյն որդին է, և իւր քարոզելու ձիրքը և հակամիտութիւնը թերևս իւր հօրմէն ժառանգած է: Մեքենաբար կամ առանց հասկնալու չխօսիր: Ժամանակ մը ետքը կրնայ պատմել իւր խօսած քարոզները: Խօսելու ժամանակ իւր լրջութիւնը երբեք չկորսնցուններ և երբեք չուզեր որ ուրիշները խօսին կամ անյարմար դիրքով կենան քարոզին ատենը: Երկինքի և Քրիստոսի վրայ մանաւանդ խօսիլ շատ կը սիրէ: Իւր քարոզներէն օրինակներ յառաջ բերմ:

«Յիսուս բարի Հայր մըն է: Անիկա մեզի համար փառաւոր պալատ մը



ԶԱՆԶԻՊԱՐ

ձլաս բերելով իւր անձին քան զոր կարելի է բուժել բոլոր իւր կենաց մէջ: Պէտք չէ որ կորսնցունէ իւր կենանքը ջանալով բան մը կորսուելէ կամ աւրուելէ ազատել: Պէտք չէ որ խորհի թէ ինքն է չափահաս մարդ մը, ոչ ալ ձեռք զարնէ ընել չափահաս մարդու մը գործը: Պէտք չէ որ ըլլայ յանդուգն, ոչ ալ զգայ ինքզինք չափազանց անկախ. բայց պարտի ըլլալ համբերող, ժրջան, հանդարտ և յօժար սորվելու: Եւ յայնժամ պիտի գտնէ շատեր որք ուրախութեամբ պիտի խրատեն զինք, պիտի սորվեցունեն և պիտի օգնեն իրեն:

Հօրը տեղը բռնող տղան պէտք չէ որ մտնայ իւր հօր բարեկամները: Իմաստունը կ'ըսէ, «Քու բարեկամը ու հօրդ բարեկամը մի թողուր» (Ա.

կը ծնրագրէր, շնորհաց թժուռին առջևը, կանգուն պահել ընտանեկան երկրպագութեան սեղանը, և խնդրել Աստուծոյ օրհնութիւնը օրական հացին վրայ. և այսպէս պիտի գտնէ զօրութիւն և օգնութիւն զոր կարող չէ գտնել ուրիշ տեղ: Եւ Տէրը որ ըսած է, «Որբերդ թող սուր, ես զաննք ողջ կը պահեմ. ու քու որբւարիներդ թող ինձի ապաւինին», երբեք պիտի ետ չպահէ իւր օգնութիւնն անկէ կարօտութեան ժամանակ, եթէ միայն դնէ նա իւր յոյսը և վստահութիւնը անոր վրայ:

Թող անոնք որ տակաւին կը վայելն հօր մը սէրը, շնորհակալ ըլլան Աստուծոյ իրենց անկէ շարունակ ընդունած ողորմութեան համար. բայց ամէն տղայ որ կը մեծնայ իւր հօր խնամքին ներքև, թող արթուն ըլլայ

պատրաստած է : Այս աշխարհին տու-
ները աղէկ չեն , ցած բաներ են ,
հովէն կը փչին : Այս աշխարհին մէջ
չատ մը գէշ բաներ կան , շատ մը
չար մարդիկներ կան : Բայց Յիսուս
մեզի համար փառաւոր պալատ մը
պատրաստած է : Հոն երգ պիտի եր-
գենք , Յիսուսի ոտքերուն քովը պի-
տի նստինք ,” ևն . : Ուրիշ քարոզի
մը մէջ ըսաւ . “Մենք մեզի Յիսուսի
վրայ խօսելու ենք իրարու հետ . Եր-
բոր իրարու քով կու գանք , ուրիշ
բաներու վրայ կը խօսինք , պարապ
բաներու վրայ կը խօսինք :” Այս քա-
րոզը ըմբռնելէն ետքը երբ իւր
ունկնդիրներն իրարու հետ կը խօսէին ,
անոնց յիշեցուց իւր քարոզը և ըսաւ .
Թէ դարձեալ ուրիշ բաներու վրայ
կը խօսէին :

Սիրելի բարեկամներս , այս փոքրիկ
քարոզչին և անոր քարոզներուն վրայ
գրելուս նպատակն է ձեզ ցուցնել
թէ փոքրիկ հասակի մէջ ալ կրնաք
Յիսուսը սիրել : Յիսուս շատ կը սիրէ
փոքրիկները , և շատ կ'ուրախանայ
երբ ձեր փոքրիկ սիրտերն անոր նուի-
րէք :

Ձեր Կէ երեց եղբայր

ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

Տպագրատան մը գործաւորաց մին ,
մինչ իւր ընկեր գործաւորը դուրս
կ'ելլէին գարեջուր խմել գործոյ ժա-
մերու մէջ , դրամատունը կը դնէր
ճիշդ այնքան ստակ որքան պիտի
ծախսէր եթէ դուրս ելլէր անոնց
հետ խմելու համար : Հինգ տարի
այսպէս շարունակեց հաստատամու-
թեամբ : Յետոյ երբ գնաց հասկնալ
դրամատան յանձնած ստակին որքա-
նութիւնը , ահա 120 օսմ ոսկւոյ գու-
մար մը հաւաքուած էր հոն : Այդ
հինգ տարիներուն մէջօր մը անգամ իւր
գործէն ետ մնացած չէր հիւանդու-
թեամբ : Իւր աշխատակիցներէն չորս ,
հինգ անձինք նոյն միջոցին եղած էին
արեքցողներ , և անպիտան իբրև գոր-
ծաւոր , և արձակուած էին : Չուր իը-
մողը գնեց տպագրական մամուլ մը ,
երթարով ընդարձակեց իւր գործը , և
իւր ստակը դրամատունը պահ տալէն
քսան տարի ետքը 20,000 անգղ . ոսկ-
ւոյ տէր եղած էր :

ՁԵԼԱՆՏԻՈՅ ՄԷՋ ԵԿԵՂԵՑԻ ԳԱՅՈՂՆԵՐ

Չբանտիս է գաւառ մը որ կը բաղ-
կանայ Հոլանտայի հարաւային արև-
մտեան մասին մէջ գտնուող ինն կղզ-

ղիներէ : Պատկերը կը ներկայացունէ
Չբանտացի տիկին մը որ եկեղեցի
կ'երթայ : Անոր տարօրինակ գլխանոցը
և գօտին լայն ճարմանդը (քոֆա) ու-
չադրութեան արժանի բաներն են
իւր զգեստին վրայ . բայց ի՞նչ է ձե-
ռաց մէջ կրածը : Փոքր արկղ մը հաւա-
նականապէս ծակծկուած պղինձէ , որոյ
մէջ կը դրուի ամանով կրակ ոտուրները
տաք պահելու համար եկեղեցւոյ պաշ-
տաման միջոցին : Այսպիսի «ոտից ջեր-
մոցներ» հասարակ էին Ամերիկայի մէջ
իմ մանկութեան ատենը : Ժողովրդէն
ոմանք կառքերով կու գային հինգ մը-
ղոն հեռաւորութենէ , և այս ոտից
ջերմոցները անոնց ոտուրները տաքուկ
կը պահէին թէ՛ ճամբան և թէ՛ եկե-
ղեցւոյ մէջ : Սուաւօտու և կէս օրէն
ետքի պաշտամանց մէջտեղ տիկնայք



ԵԿԵՂԵՑԻ ԳԱՅՈՂ ԶԵԼԱՆՏԱՅԻ ՏԻԿԻՆ

շատ անգամ իրենց կրակի ամանները
կը լեցունէին եկեղեցւոյն ջերմոցներէն :

ՅՃԱՌԻ ԽՈՇՈՐ ՊՂՊՁԱԿՆԵՐ ՇԻՆՆԸ
Մեծ դրօսանք է օճառի պղպղակ-
ներ չինել , բայց կրկնակի դրօսանք է
եթէ պղպղակներն ըլլան խոշոր , և
բաւական զօրաւոր այնպէս որ չկոտ-
րին եթէ տախտակամածին վրայ նետ-
ուին : Մարդու գլխի չափ մեծ պղպղ-
ջակներ կրնայ դիւրութեամբ ուռե-
ցունել որ և իցէ անձ որ գիտէ օճառի
պղպղակի նիւթը բաղադրել : Պղպղակ-
ները յառաջ բերելու համար առ ըն-
կոյղի մեծութեամբ կտոր մը օճառ .
Հայեցուր զայն գաւաթ մը տաք ջրոյ
մէջ , յետոյ յաւելցուր մէկ թէյի դրը-
գալ կ'եղին : Լաւ մը խառնէ , և փչէ
զայն փչման խողովակի մը մէջ : Եւ
ահա յերևան կու գան պղպղակներ որ
անեղծ կը մնան կէս օրի չափ ժամա-
նակ : Բաց կարմիր պղպղակներ ունե-
նալու համար յաւելցուր քանի մը կա-

թիլ ելակի հիւթ , և դեղին պղպղակ-
ներ ստանալու համար՝ քիչ մը նարնջի
ջուր :

ԱՆՏԱՄԱՆԻ ԹՁՈՒԿՆԵՐԸ

Հաւանականապէս կը գտնուին
մանչեր կամ աղջիկներ որ երազած
են ստանալ զրօսանքի համար խումբ
մը թզուկներ որք կատարեն ինչ որ
հրամայուի իրենց իբրև կենդա-
նացած պաճուճապատանքներ : Թը-
զուկներ գտնուած են յԱփրիկէ ,
բայց Պէնկալայի Ծոցին մէջ Անտաման
կղզեաց բնիկները աշխարհիս մէջ
մարդկային ամենէն մանր ցեղն են .
կատարելապէս մեծցած Անտամանցւոյ
մը միջակ բարձրութիւնն է չորս ոտք
և հինգ մատ , և անոնցմէ ոմանց ծան-
րութիւնն է աւելի քան եօթանասուն .
և վեց լիտր : Ոտքի զարմանալի արագու-
թիւն ունին , և որովհետև իրենց մար-
մինները կ'օժեն իւղի և կարմիր ներկի
(ալը պոպոլ) խառնուրդով , շատ տարօ-
րինակ երևոյթ մը կը ստանան : Քիչ
ճանապարհորդք կ'ուզեն պատահիլ
այս փոքրիկ պատերազմիկ ժողովրդէն
մէկուն , վասն զի շատ ճարտար են
նիզակ և նետ արձակելու օտարակա-
նաց , որոց վրայ յարձակելու միշտ
պատրաստ են : Անոնց վարմունքը եր-
բեք չէ այնպիսի որ փափաքելի ըլլայ
իրենց ներկայութիւնը աղպոց խաղի
սրահներուն մէջ , վասն զի կ'ըսուի թէ
մարդ կ'ուտեն : Աժուխի պէս սև են ,
և կը թուի թէ իրենց սիրելի սովո-
րութիւնն է իրենց մարմնոյն վրայ կրա-
րուածներով նկարներ գծել : Մովորա-
բար զայս կը սկսին երբ մանուկը կ'ըլ-
լայ ութ տարեկան , միջոցներ գործա-
ծելով այնպիսի վիճակի մէջ դնելու
համար անոր մարմինը որ ընդունի
և պահէ տրուած գոյնը : Կ'ուտեն
միս , կրիայ և վայրենի մեղր , և հա-
զիւ կը կշտանան եթէ չուտեն երկու
քաշ ուտեստ : Կը բնակին տերևներէ
չինուած խրճիթներու մէջ և , հակա-
ռակ իրենց ազատութեան որ կը հա-
ւասարի վայրենութեան , վերջին աս-
տիճան դիւրագրգիռ են :

Ամերիկայի Մեթոտիկական Կողմէն
Արտօճուած ԳՐԱՐՆԵՐ
Տնօրէն—Կ.ՊԱՐՆԸՍ
Ճինճանճըր Կողմէն Կողմէն խան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏԳՐԱՆԻ Ա . ՅԱԿՈՒ ԳՕՍԱՅԱՆ